մեկնաբանությունը՝ ցանկացած անձի՝ անկախ որևէ իրավունքի կամ օրինական շահի պաշտպանության անհրաժեշտությունից, գնման գործընթացը վիճարկելու հնարավորություն ընձեռնելու մասով, կխաթարի Օրենքի հիմնական նպատակներից մեկը, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:

5. Դատական ծախսեր.

ՔԴՕ 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՔԴՕ 105-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, գործի քննության հետ կապված այլ ծախսեր են գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները:

ՔԴՕ 108-րդ հոդվածի համաձայն. «1. Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում:

2. Գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:»:

ՔԴՕ 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանն արձանագրում է, որ հայցը ամբողջությամբ մերժելու պարագայում դատական ծախսը պետք է կրի Հայցվորը և հաշվի առնելով պետական տուրքի նախապես վճարված լինելը, դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-րդ, 362-րդ հոդվածներով

ՎՃՌԵՑ

1. Հայցը մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Մխեյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEC6-5C03-4683-9821 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am